

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

Ամենազատու

Տ. Եղիշ Ս. Արքեպս. Տէրտէրեան,
Բարեխնամ Պատրիարք
Ս. Երուսաղէմի.

Սրբազան Հայր,

Պատիւը և հաճոյքը ունիմ Ձերդ Ամենա-
պատուութեան ներկայացնելու Ս. Թարու-
թեան Տաճարի Հանգանակութեան տեղեկա-
դիրը:

Ձերդ Սրբաղնութեան բարեհաճ կար-
դարութեամբ, Հանդանակութեան պա-
տասխանատուութիւնը ստանձնեցինք 1962-ի
Դեկտեմբերի սկիզբը: Մեր առաքելութեան
առաջին Հանգրուանը եղաւ Մայր Աթոռ Ս.
Էջմիածին, ուր տարինք Ձերդ Ամենապա-
տուութեան փափաքը՝ որ Ն. Ս. Օծութին Տ.
Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսը
ստանձնէր Ս. Թարութեան Տաճարի Հան-
դանակութեան նախազանգութիւնը:

1962-ի Դեկտեմբերի 11-ին ներկայա-
ցանք Ն. Ս. Օծութեան և յանձնեցինք Ձերդ
Սրբաղնութեան նամակը: Իսկ Դեկտեմբերի
18-ին՝ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի
լիակազմ նիստին, ուր ներկայացանք և ան-
հրաժեշտ ժանրամասնութիւնները Հաղոր-
դեցինք Ս. Թարութեան Տաճարի նորոգու-
թեան հետ կապուած հարցերուն, Նորին
Վեհափառութիւնը պաշտօնապէս յայտնեց
իր սրընդամբ՝ ստանձնելու Հանգանակու-
թեան նախազանգութիւնը, կազմելու հա-
մազգային Յանձնախումբ մը և անձամբ նա-
խազահելու անոր առաջին նիստին, Երու-
սաղէմի մէջ:

25 Դեկտեմբեր 1962 թուակիր նամակ-
ներով, Վեհափառ Հայրապետը նշանակեց
Համազգային Յանձնախումբը հետեւեալ
կազմով.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.

Կաթաղիկոս Ամենայն Հայոց
ԱՄԵՆ. Տ. ԵԳԻՇԵ Ս. ԱՐԳԵՊՍ.

Պատրիարք Հայոց Երուսաղէմի
ԳԵՐԴ. Տ. ՍԻՈՆ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի
ԳԵՐԴ. Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Կաթ. Պատուիրակ Եւրոպայի
ԳԵՐԴ. Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐԳԵՊՍ. ԱՊԱՏԵԱՆ

Կաթ. Պատուիրակ Հար. Ամերիկայի

ԳԵՐԴ. Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ Թեմին

ՀԱՅԿ ԳԱՎՈՒԲՆԱՆ

Հիւսիսային Ամերիկայի Թեմ

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՏԻԱՐՊԵՔԻՐԵԱՆ

Հարաւային Ամերիկայի Թեմ

ԵՐՈՒԱՆԻ ՀԻՒՍԻՍԵԱՆ

Արեւմտեան Եւրոպայի Թեմ

ԶԱՐԼԶ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

ԱԼԷՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՅԱՃԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՃԱՆ ՔԻՐԻՔՃԵԱՆ

ՆՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ՈՒՈԼԹԸՐ ՎԱՐԴԱՆ

ԵՒՈՒԱՐԴ ՄԱՐՏԻԿԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԵՒՈՒԱՐԴ ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԶՄԱԶԵԱՆ

ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊԵԱՆ

ԱՐԴՐՈՒՆԻ ԶՐԱԸՇԵԱՆ

ՄՈՒՇԵԼ ՃԵՐԷՃԵԱՆ

27 Դեկտեմբերին, հրաժեշտ առինք Ն. Սրբութեանն և Ս. Էմիլիանին օրհնութեամբ ճամբայ ելանք դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգները, սկսելու համար նախապատրաստական աշխատանքը:

Նիւ Եորք հասանք 1963 Յունուարի 7-ին, և մեր ժխարանկից Հոգշ. Տ. Կիւրեղ Վարդապետին հետ, որ ամիսներէ ի վեր կը սպասէր Նիւ Եորքի մէջ՝ տրամադրուելու համար նուիրակութեան նոյն գործին, ներկայացանք Հիւսիսային Ամերիկայի Թեմի Առաջնորդ՝ Գեբը. Տ. Սիւրն Արքեպս. Մառտինիին:

Առաջնորդ Սրբազանը, իրեն ծանօթ աշխուրթեամբ, ընդառաջեց մեր առաջարկին և կազմեց Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողով մը, ըստ հետեւեալին.

Ա. Առեմապետ

Տիար Հայկ Գալուսեան

Բ. Առեմապետ

Տիար Տատուր Տատուրեան

Ա. Առեմապետ

Տիար Նշան Շահինեան

Բ. Առեմապետ

Տիար Տիգրան Յ. Պոյանեան

Գանձապահ

Տիար Զարիգ Գաբրիէլեան
Խորհրդակցանք

Օրդ. Լէյլա Գարակէօզեան

Տիկ. Ֆլորա Սարգիսեան

Տիկ. Մաքրուհի Յովսէփեան

Տիար Ալեք Մանուկեան

Տիար Եղաւարդ Մարտիկեան

Զօր. Սարգիս Զարդարեան

Տիար Յարութիւն Թադանեան

Տիար Ռիչարտ Գ. Կրէկարի

Տիար Ուլթըր Վարդան

Տիար Ճօրն Պաշեան

Տիար Լըտ Շահպազեան

Տիար Տիգրան Մմարեան

30 Յունուար 1963 Թուակիր «Կոչ»ով, Գեբը. Տ. Սիւրն Արքեպիսկոպոս հրապարակեց Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովի կազմութիւնը և, չեղով մը ուր կ'արձագանդէր իր սէրը՝ Երուսաղէմի իր հոգեւոր տան հանդէպ, ջերմապէս յորդո-

րեց իր Թեմի պատասխանատու մարմինները և Հոգեւորական գասը, «որպէսզի իրենց գործօն օժանդակութիւնը բերեն այս սրբազան գործի յաջողութեան համար»:

Կր կցենք օրինակ մը յիշեալ «Կոչ»ին եւ անոր անցկիւնն թարգմանութեան:

Ամերիկայի Կեդրոնական Յանձնախումբին հետ մեր առաջին ժողովին կազմեցինք Դիւանը և գործունէութեան ծրագիր մը: Նուիրակներուս պաշտօնը պիտի ըլլար շրջի Ամերիկայի Թեմի եկեղեցիները և կազմել տեղական յանձնախումբեր, գործնականապէս սկսելու և յառաջ տանելու համար հանդիսանալով: Նոյն ժողովին մէջ ճշդուեցան նաեւ եկեղեցիներուն ճշմարտեանը և դանձապահութեան դրութիւնը, որով, հանդիսանալով գումարները պիտի փոխանցուէին Առաջնորդարան, որը, արժանապէս ետք դանձեց, պիտի յղէր Պրն. Զարիգ Գարակէօզեանին, գումարները մատակարարելու եւ ստացադիրները ուղարկելու համար:

Նուիրակներս անմիջապէս ձեռնարկեցինք մեր շրջապայութիւններուն, ծանօթացնելու համար ամենուրեք մեր առաքելութեան նպատակը, Ս. Յարութեան Տաճարի և միջնադպարին այլ Սրբավայրին մէջ Հայոց Կայսրած իրաւունքներուն տարողութիւնը: Ներկայացուցինք Տաճարի վերանորոգութեան ծրագիրները, չեղեցինք Հայոց բաժին ինկած գումարին ծանրութիւնը և կոչ բրինք, այս առթիւ, Ամերիկայի Հայոց աղեւ սիրտերուն, որ ինչպէս միշտ, անգամ մը եւս ազգային այս առաջ կարիքին երկարեւ իշխանական իրենց ձեռքը:

Միտքերու պատրաստութեան կենսական գործին մէջ, իրենց մամուլի էջերը լայն բացին մեր առջեւ «Պաշար» և «Թիւր Միւրը-Սթէյթսմէն» թերթերը, որոնք լման թիւեր նուիրեցին և խմբագրականներով չեղեցին հանդիսանալութեան ազգային հանդամանքը: Երախտագիտութեամբ կ'ուզենք յիշել այստեղ վերոյիշեալ թերթերու այն բացառիկ թիւերը, ուր հրատարակուեցան Վեհ. Հայրապետի 30 Ապրիլ 1962 Թուակիր սրբատառ Կոնդակը, Ամեն. Պատրիարք Հօր Սրտապին Կոչը, Առաջնորդ Սրբազանին «Կոչ»ը, պատմական ակնարկ մը և

որտառուչ խմբադասականներ, ինչպէս նաեւ որդուածաշարքեր, կոշեր և խմբադասականներ, որոնք տարին Վեհափառ Հայրապետին խօսքը ամենէն կարծրացած գիտակցութիւններուն անգամ: Պրն. Վահրամ Կէօքճեանի յորդածաշարքը՝ Հայ երուսաղէմի անցեալի և ներկայի մասին, ծանօթացման փորձէ մը աւելի՝ պատմագիտական գեղեցիկ համառոտագրութիւն մը եղաւ:

Նոյնպէս, ամբողջական համակրութեամբ, Պրն. Ս. Թումայեան հանգանակութեան առաջին օրէն մինչեւ վերջը, լայն բացաւ իր սիրան ու հոգին:

Երուսաղէմի նկատմամբ չարամտօրէն տարածուած վարկաբեկիչ լուրեր, Հին քե-նախնդրութիւններ և յապաղած հաշիւներ երկարացուցին միտքեղու պատրաստութեան աշխատանքը ևս ստիպեցին մեզ մի քանի անդամներ համորդել բազմաթիւ քաղաքներ՝ կարենալ կազմել առաջ հանգանակիչ յանձնախումբեր և ձեռնարկել առաջ հանգանակութեան:

Բազմաթիւ ծուխերու մէջ, նոր եկեղեցիներու, սրահներու և դպրոցներու շինութեան մեծ արշաւը որ կը տարածուի աշմ և հետզհետէ կ'ընդգրկէ լայնատարած Ամերիկայի բոլոր Հայ համայնքները, այլապէս դժուարացուց հանգանակութեան կանոնաւոր ընթացքը և, մի քանի ծուխերու մէջ, անկարելի ըրաւ զայն:

Սակայն, բոլոր այն համայնքները ուր գոնեւեցան բարեհաջակած հոգեւոր հովիւներ և մեծասիրտ առաջնորդող ազգայիններ, կանոնաւոր կերպով տարինք հանգանակութեան նախապատրաստական աշխատանքը, կազմեցինք յատուկ յանձնախումբեր երեւելի և նուիրեալ ազգայիններէ և ապա՝ անհատական դիմումներով և հրապարակային ձեռնարկներով իրադրեցինք մեր նպատակը:

Ամերիկայի Արեւելեան Թեմի հանդա-նակութիւնը ունեցաւ չորս ամիսներու ընդմիջում մը. 1963-ի Մայիս 15-էն մինչեւ Նոյեմբեր 15, երբ Նուիրակներս վերադարձանք Ս. Աթոռ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎազդէՆ Ա. Վեհ. Կաթողիկոսի երուսաղէմ ա-ցելութեան և Համազգային Յանձնախումբի ժողովին առթիւ: Այս ընդմիջումը հանգա-նակութեան ընթացքը կը բաժնէ երկու շըր-

ջաններու. 1963-ի Ապրիլէն մինչեւ Յունիս, և նոյն տարուայ Նոյեմբերէն մինչեւ 1964-ի Փետրուարի վերջը:

Առաջին նախաժողովեան շրջանի հան-դանակութեան բացումը կատարեց իր մեծ հոգիի և անսահման սիրտի բարիքնե-րով ծանօթ Տիար Հայկ Գալուքճեանը, իր պոնուափայլ տիկնոջ հետ, որոնք 1962-ին այցելած էին Երուսաղէմ, զննատաած գործին կարեւորութիւնը և տրամադրած 20.000 տոլար, ի յիշատակ իրենց ծնողաց, կանգնելու համար մողայիք մը՝ Ուշաթափման Վայրին նայող: Այս առթիւ աւելցնենք որ Ամերիկայի Կեդրոնա-կան Յանձնախումբի Ատենապետի իր Ժրա-ջան գործունէութեան ու իր անձնական մի-ջամտութիւններուն կը պարտինք հանգա-նակութեան յաջողութեան մեծ բաժին մը. իսկ իրեն և Ատենապետ Նիւ Եորքի Ս. Ուշ եկեղեցւոյ, Պրն. Հայկ Գալուքճեանի անձնական հեղինակութեան արդիւնք եղաւ իր եկեղեցիին և համայնքին այն որոշումը, որով Նիւ Եորքի ամենահին այդ եկեղեցին յանձն առաւ իրեն բաժին ինկած 40.000 տո-լարի բաժինը վճարել չորս տարիներու վրայ, տարեկան իր «պաղար»ի եկամու-տէն:

Իշխանական Նոյն ոգիով և աւանդական բարեգործութիւններով ծանօթ Գարակէօզե-ան ազգանուէր տոհմին երկու շառաւիղ-ները՝ Օր. Լէյլա և Պրն. Զարլզ Կարապետե-անները հետեւեցան նոյն օրինակին և կա-տարեցին առաջին մեծ նուիրատուութիւնը՝ 60.000 տոլար, և փափաքեցան իրենց բա-րեխաւատակ ծնողաց ձօնուած տեսնել Ս. Յարութեան Տաճարի խորաններէն մին:

Առաջին վայրը, ուր կատարուեցաւ հա-ւաքական հանդանակութիւն Ամերիկայի յատուկ ձեռով, ճաշկերպութի մը շուրջ, Նիւ Եորքի Ս. Առաքելոսեան եկեղեցւոյ փոք-րաթիւ համայնքը եղաւ, և շնորհիւ տեղ-ւոյն հովիւին՝ Արթ. Տ. Մամբրէ Գէնյո. Նա-պարեանի անձնական ճիգերուն, և վայելած համակրութեան, արդիւնքը եղաւ սպաս-ւածին կրկնապատիկը, ինչպէս կ'երեւի կցեալ ցանկէն:

Առաջին շրջանին, հանգանակութիւնը շարունակուեցաւ Հարփրտի, Տիթրոյթի, Ուսթրի, Ռիչմընտի, Սիբադիւսի և Ռէյ-

սինի մէջ, մեր և Հոգւ-Տ. Կիրեղ Վարդապետի նկատմբ։

Յատուկ կարիտադիտութեամբ և յիշատակութեամբ պարտինք արձանագրել այստեղ Տիթրոյթի Հայութեան զոհողութեան ողին և յատուկ ջերմութիւնը, որով, հազիւ վերջացած է նոր սկսելիք երկու մեծ հանդանակութիւններու միջեւ, ուղեց պատուով կարտարի իր պարտականութիւնը համադրային հանդանակութեան ծոթին, և շնորհիւ երկու մեծ առաջնորդներու՝ Պրն. Լ. Մանուկեանի և Պրն. Ե. Մարտիկեանի օրինակին, Ս. Երուսթեան Տաճարի հանդանակութիւնը վերանայ յաղթանակի մը։

Ընդմիջելէ առաջ հանդանակութիւնը, անհատական դիմումներ կատարեցինք նաեւ Ամերիկայի և Հայ Իրականութեան ծանօթ բարձրարներէն Զօր. Սարգիս Զարգարեանին, Տիար Խորէն Խոլիկեանին, Տիար Տատուր Տատուրեանին, Տիար Զօրճ Պաշեանին, Տիար Երուսթեան Թադոսեանին, Տիար Զան Միրաքին, ինչպէս նաեւ Վարդանանց Ասպետներուն և Տիկնանց կաղմակերպութիւններուն և բոլորն ալ մեծազուժար նուիրատուութիւններով առանձնեցին յատուկ յիշատակարանի մը նորոգութիւնը, ինչպէս կ'երեւի ձօնուած յիշատակարաններու յատուկ ցանկին, զոր կը կցենք։

1963-ի Մայիսի վերջը ուրիշակներս վերադարձնեմք Ս. Աթոռ, ուր կը սպասուէր վեհափառ Հայրապետի ժամանումը։ Վեհ. Հայրապետի այցելութեան յետաձգումը ստիպեց մեզ սպասել Երուսաղէմի մէջ։ Սակայն նոյն այս միջոցին, Ուոթթըթաունի Ս. Յակոբ Եկեղեցին կաղմակերպեց և կատարեց իր հանդանակութիւնը, բացառիկ յաջողութեամբ։

1963-ի Հոկտեմբեր 15-ին, Երուսաղէմի մէջ տեղի ունեցաւ Ս. Երուսթեան Տաճարի նորոգութեան Համադրային Յանձնախումբի պատմական նիստը, ուր ներկայացուցինք հանդանակութեան առաջին մասին արդիւնքը։ Տեղեկապրիս կը կցենք Երուսաղէմի ժողովին աստեղագրութիւնը։

Նոյեմբերի 15-ին վերադարձանք Միացեալ Նահանգներ և վերսկսանք մեր շրջապատութեան։ Մինչեւ Փետրուար 15, 1964, երեք ամիսներու ընթացքին, շրջեցանք շտաբ և մէկ համայնքներ։ Ամէն տեղ Հոգեւ-

որ Հովիւները ծանօթացուցած էին մեր առաքելութեան նպատակը, ծխական թերթիկներու միջոցաւ։ Մենք, անհատական այցելութիւններով, Եկեղեցւոյ բեմէն և ճակերոյթներու սեղաններէն դիմեցինք Ամերիկայի մեր սղնիւ ժողովուրդի դիտակցութեան և արդիւնաւորեցինք հանդանակութիւնը։

Այսպէս, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի քառասուն և մէկ ծուխներէն Վեհ. Հայրապետի ձայնին արձագանդող և մեր նուիրականութեան դիմումին ընդառաջող Եկեղեցիները եղան թուով երեսունչորս, որոնք են.

Նուարքի Ս. Աստուածածին
Հարլորտի Ս. Գէորգ
Տիթրոյթի Ս. Յովհաննէս
Ուոթթի Ս. Փրկիչ
Սիւրպիւի Ս. Պօղոս
Բիւթնոյի Ս. Յակոբ
Բէյքիւնի Ս. Մեհրապ
Նիւ Պրքերի Ս. Յարութիւն
Պրնկեմբերի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Նիւ Երքի Ս. Խաչ
Էյմսթերի Ս. Յակոբ
Ուոլփորտի Ս. Գէորգ
Սաւթ Միլուոլիի Ս. Յարութիւն
Բրոքլինքի Ս. Սահակ-Մեսրոպ
Շիքսիոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Նիւ Երքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Թորոնթոյի Ս. Երրորդութիւն
Մոնթրէլի Ս. Հայր. Եկեղեցի
Պոնթիակի Ս. Երրորդութիւն
Պրնկեմ Գաւթնի Ս. Հայր. Եկեղեցի
Ուէսթ Ֆիլատելֆիայի Ս. Սահակ-Մեսրոպ
Նորթ Ֆիլատելֆիայի Ս. Երրորդութիւն
Բաթլորտի Ս. Ղեւոնդեանց
Իսթ Սէնթ Լուիսի Ս. Շողակաթ
Հէյլփրիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Լոքէսի Ս. Խաչ
Լոպէլի Ս. Վարդանանց
Սրբինկֆիլիպի Ս. Յովհաննէս
Թորոյի Ս. Պետրոս
Ուոթթըթաունի Ս. Յակոբ
Ուէսթ Ալլէսի Ս. Յովհաննէս
Ուէսթ Բուլմանի Ս. Յովակիմ և Աննա
Գիլփլէսոյի Ս. Հայր. Եկեղեցի։

Կը կցենք վերոյիշեալ համայնքներուն մէջ հանդանակուած գումարներուն հաշուեցոյցը, ուր կ'երեւին զթօթանքը և արդիւնքները:

Իսկ անոնք որ, հակառակ մեր կրկնակի դիմումներուն և խնդրանքներուն, այլեւայլ պատճառաբանութիւններով չմասնակցեցան Ս. Յարութեան Տաճարի հանդանակութեան, հետեւեալ եօթը եկեղեցիներն են.

Իւնիւրն Սիթիի Ս. Խաչ
Միամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ
Լոնկ Այլընտի Նահատակաց
Պրիճորթի Ս. Յարութեան
Ազպէրի Բարբի Ս. Աստուածածին
Ուաշինկթընի Ս. Աստուածածին
Ս. Գաթըրինի Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Բացի կազմակերպուած համայնքներէն, այցելեցինք նաեւ տասնմէկ քաղաքներ, ուր դասնք բազմաթիւ հայեր, որոնք պատաս-

խանցին մեր դիմումին և բերին իրենց մասնակցութիւնը հանդանակութեան: Յատուկ յիշատակութեամբ կ'ուզենք յիշել այստեղ Պրն. Սարգիս Թէրզեանը, Ինտիանարոյիսէն, որ 5-000 տուրքի պատկառելի գումար մը արամադրեց Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան:

Ինչպէս որոշուած էր թէ՛ Ամեր. Կեդր. Յանձնախումբի ժողովին և թէ՛ Համազգ. Յանձ. ի Երզմ. ժողովին, հանդանակուած գումարները փոխանցուեցան Առաջնորդարան, Նիւ Էորք, ուրկէ յանձնուեցան Գանձապահ Տիար Զարզ Գարակէօզեանին, որ, իր կարգին, յատկապէս պատրաստուած ստացագրերն յղեց բոլոր նուիրատուներուն:

Տեղեկագրիս կը կցենք նաեւ ցանկը ծախքերուն, որոնք բոլորն ալ վճարուեցան Առեւտրայեւ Պր. Հայկ Գալուքեանի հրամանով, Գանձապահ Պրն. Զ. Գարակէօզեանի կողմէ:

Ամրողացներու համար մեր համարատուութիւնը, անհրաժեշտութիւնը կը ըզդանք շնչեղութեւն այստեղ որ հանդանակութեան մեծապէս նպաստեցին բազմապիսի հրատարակութիւններ, ձայնասփիւռի յատուկ ծրագրերն և հեռաձայնի տեսուչութիւններ, որոնց մանրամասնօրէն անդրադառնալ շատ պիտի երկարէր մեր տեղեկագրերը: Բացի հայ մամուլէն, որուն անդրադարձանք, Ամերիկեան մամուլին մէջ աշխատեցանք հրատարակել յօդուածներ և նկարներ, որոնց ամենէն յաջողները եղան Տիթորոյթի և Բրովիտէնսի Թերթերու յօդուածները, որոնցմէ կը կցենք օրինակ մը:

Այսպէս, Սրբազան Հայր, վերջ դառած մեր առաքելութեան արդիւնքը ներկայացնելով Ձերդ Ամենապատուութեան, անդամ մը եւս պարտք կը գդանք արձանագրելու այստեղ թէ Ամերիկայի պատուական հայութեան մեծ նպաստը մեր հանդանակութեան՝ արձադանդն է և պատասխանը Ս. Էջմիածնէն բարձրացած հայրապետական ձայնին, որ, սրբաառու Կոնդակով, Երուսաղէմի Կոչով և Համազգային Յանձնախումբի նախագահութեամբ, Կաթողիկոսական Իշխանութեան ամբողջ հեղինակութիւնը և շուքը պատուանդան ըրաւ հանդանակութեան: Այսօր, ոչ միայն նիւթական յաջողութեան մը պատկերն է, զոր ուրախութիւնը ունենք ներկայացնելու Ձերդ Ամենապատուութեան, այլ մանաւանդ բարոյական նուաճումի մը, որ է Ամերիկայի հայութեան սէրը և մատահանութիւնը Ս. Յակոբեանից դարաւոր այս Աթոռին և անոր նախանձախնդիր և ժրաջան Գահակալին՝ Ձերդ Ամենապատուութեան հանդէպ:

Որդիական ակնածանօք
Մատչիմք ի համբոյր
Ս. Աջոյդ՝

Շահէ Վրդ. Աճէմեան
Նուիրակ Ս. Աթոռոյ